



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանիս խորագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խորաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Վ Ո Ւ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՎԱՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴՍԵՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի, ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊԱԿԱՐԱՍՏԱՆԻ:
Օտարաբարակացիները պէտք է դիմեն հետևեալ հասցեով՝ Тифлисъ. Редакция «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ որ սերմանել էր, այն էլ հնձում էր. Գեղեցիկ օրինակ.— ՆԱԻԲԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Թող փաստերը խօսեն. Նամակ բազուկից. Նամակ վաղարշագոտից. Նամակ կարսից. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԱՆՈՒԳԻՆՆԵՐ.— ԲՈՐՍՈՒ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Մօսկվայից.

ԻՆՉ ՈՐ ՍԵՐՄԱՆԵԼ ԷՔ, ԱՅՆ ԷԼ ՀՆՁՈՒՄ ԷՔ

Ֆրանսիան այլասեռութիւն է, Ֆրանսիան նուազում է, Ֆրանսիան ընկնում է ֆիզիքայէս, բարոյական և մտաւորական, — ահա ինչ ողբեր են արձակում ամեն օր Ֆրանսիայի հայրենասէրները և զարմանք են յայտնում, թէ ի՞նչ է պատճառը, որ Ֆրանսիան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՕՍԿՎԱՅԻՑ

V

Մայիսի 16-ին

Հեռագիրը աշխարհի ամեն ծայրերը արդէն տարածեց իր լուրերը, մայիսի 14-ին, արտակարգ չեղումով հատարված թագադրութեան նկարագրութիւնը: Բազմաթիւ արտասահմանեան պատգամաւորութիւնները ցրցէին տալիս, որ երբեք Ռուսաստանը հասած չէ եղել աւելի մեծ քաղաքական զօրութեան, քան այժմ. բոլոր պետութիւնները զգում են նրա զինուորական մեծ ոյժը և աշխատում բարեկամ լինել նրան: Ոչ թէ միայն ցամաքային մեծ պետութիւններն չարքում նա մի կօչօս է այժմ, այլ և ծովային պետութիւնները իրանց կաշկանդված են տեսնում և առանց նրա հաւանութեան մի քանի չեն կարողանում անել: Այդ ոյժի և ինքնավստահութեան զգացմունքը արտայայտվում էր և ժողովրդի կողմից. երբեք աւելի մեծ չեղելութեամբ և աւելի բազմամարդ չեղելութեամբ չէ կատարվել այդպիսի հանդէս, սկսած Մօսկվայի առաջին Յարից, իսկան Գրօզնից (1547):

Թագադրութեան արարողութեան կարգը, ինչպէս կրօնի հետ նաև միապետական գաղափարը Ռուսաստանը փակ առաւ յունական Բիզանդիոնից: Մեծն Պետրոս, որը առանձին հակակրօնական էր ցրց տալիս դէպի հին թաթարաբնիկական կարգերն ու սովորութիւնները՝ թագադրութեան հանդիսում եւ մտքից արեւմտեան Եւրոպայից վերցրած ձևեր—ծիրանին՝ հին խալիֆայի զգեստի փոխարէն, թագը՝ հին Մօսկվայի փառաբանի տեղ և այլն: Որովհետեւ Յարը մի և նոյն ժամանակ եկեղեցու պետ է համարվում, ուստի Պետրոսից յետոյ, թագը դնել

սին, այդ գեղեցիկ և առաջագիւղ երկիրը, որից դուրս է եկել մարդկութեան ազատութիւնը, որը քարոզել և տարածել է ազատութեան, հաւասարութեան, եղբայրասիրութեան գաղափարը, այսօր այնքան այլասեռվել է:

Մի ամենամեծ աղէտն էլ այդ երկրի համար այն է, որ ծնունդների թիւը օր ըստ օրէ նուազում է, ազգաբնակչութիւնը պակասում է: Պէտք է արմատական միջոցներ որոնել այդ չարիքի և աղէտի առաջն առնելու, Ֆրանսիան նորից իր նախկին վիճակին վերադարձնելու, — շարունակ քարոզում են Ֆրանսիական դրօշները, և զրանց լծով հռչակաւոր փառաբող Էմիլ Զօլան նորերս մի յօդուած է տպել «Figaro» լրագրում, որի մէջ ասում է. «Ով Ֆրանսիայի մայրը, ծնեցեք շատ երեխաներ, որպէս զի Ֆրանսիան պահպանի իր դիրքը աշխարհում, իր գործերը և փառքը, որովհետեւ աշխարհի երջանկութեան համար հարկաւոր է, որ Ֆրանսիան դուրս թիւն ունենայ, որովհետեւ նրանից է դուրս եկել մարդկութեան ազատութիւնը, և նրանից պէտք է դուրս գայ ամեն ճշմարտութիւն և արդարութիւն: Ես կը ցանկանամ, որ կեանք մեռցնելը դադարի, որ կեանքը պաշտօնի իրեն բարեբար աստուածութիւն, իբրեւ մի անմահ երեւոյթ, յաւիտենական յայտնութեան աղբիւր: Եւ ես կը ցանկանայի, որ այդ կեանքը ունենայ հօգոր, բնական, այրական և առողջ դրականութիւն, փայլող ազնւութեամբ, համարձակ վերաբերվող դժուրքին և խօսքերին: Կը ցանկանայի, որ այդ դրականութիւնը փառաբանի ծննդաբերող սէրը, սակայն ձեռով խաղաղութեան մեծ կոթողներ ապագայ սերունդների եռացող ալիքների համար: Կը ցանկանայի, որ կազմակերպվէր առաջին

նի մարդկանց և առաքելի կանանց մի նոր հասարակութիւն, որ ամեն մի ամուսնական զոյգ տասնական դասակ ծնի, որոնց ձայներով մարդկային ուրախութիւնը հասնի մինչև արեգակը:

Տարակցաւ չը կայ, որ այդ բոլոր բարեմաղթութիւնները, հայրենասիրական գաղափար խօսքերը միայն պատիւ կարող են բերել այն դրօշներին, որոնք լուրջ կերպով մտածում են իրանց մի ժամանակ փառաւոր, իսկ այժմ փառազուրկ հայրենիքի վերածնութեան մասին, բայց որ և է չարիք արմատախիլ անելու համար, պէտք է որոնել բուն արմատը, նրա պատճառները:

Ինչից առջացաւ Ֆրանսիայի այժմեան հօգոր անկումը: Այդ անկման պատճառները ֆիզիքական չեն, ինչպէս սխալ կերպով մեկնում են մի քանի դրօշներ, այլ բարոյական: Ինչպէս ամեն մի յանցանք, ոճիր առաջ է բերում պատիժ, հատուցում, նոյնպէս և բարոյական աշխարհում, ամեն մի յանցանք, ոճիր բարոյականութեան վեհ գաղափարների՝ ճշմարտութեան, արդարութեան, մարդասիրութեան գաղափարների դէմ առաջ է բերում բարոյական պատիժ, հատուցում:

Պէտք է առողջացնել հասարակական կեանքը, պէտք է վերանորոգել դրականութիւնը, թարմացնել նրա հոսանքները, եթէ ոչ որքան էլ շատ գաւալներ ծնեն Ֆրանսիայի մայրերը, այդ չի օգնի Ֆրանսիային անկումից: Ֆրանսիան այսօր հնձում է այն, ինչ որ նա սերմանեց իր պատմութեան նորագոյն շրջանում:

ԳԵՂԵՑԻՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Վանի մէջ գործող օրիորդ Բարտոն, որ մեծ

էր միջից լողալ ռուբաններին՝ իսկոյն ցնծալից արձագանք տալիս:

Ամբօխի հոգեբանութիւնը շատ տարբեր է անհատների հոգեբանութիւնից և գոյց է ոչ մի ժողովրդի մէջ այնքան ուժեղ չէ արտայայտվում հաւաքական ինտիմիտը, որչափ ուսուի մէջ. նա ընդունակ է անձնագոյնութեամբ հետեւել իրան ոգիւրդի ետեւից մեռնել գաղափարի համար. նա ընդունակ է մոռանալ անհատականը ընդհանուրի համար. նրա մէջ չը կայ հայի աստուածացրած անհատականութիւնը: ձիւք է, քաղաքական անկախութեան ձգտումը միշտ գուրաւորված է եղել ուսու ժողովրդի մարմնում կրօնական զգացմունքով: Թէմալին, լինէր նա թաթար, լէհ, թէ ֆրանսիացի, — անհաւատ, բասուրման է՝ եղել նրա աչքում, բայց խղիւղ ոգիւրդիւնը ընդունակութեան մէջ է. 1380, 1612 և 1812 թուականները մնում են իբրեւ ապացոյց նրա հաւաքական ոյժի, թէկուզ ազգիտութիւնը և անհատականութիւնը խառնաբերվեն նրան տարբերելու մասնատանքին կաթօլիկից: Համեմատելով անկումը և ոգեւորվելու ընդունակութիւնը զարմանում են ուսու ժողովրդին մի անընկճելի, տոկուն տարեւրական սոսկալի ոյժ, որի առաջ ջանքալիւն են տեղեկը սասանեցնող նուաճողները: Պետական միութեան գաղափարի մարմնացումը ներկայացուցիչը, Ռուսաստանի քաղաքական ոյժը, ուղղափառ հաւատի սրբութիւնը՝ ամփոփվում են ժողովրդի աչքում թագաւորի անձի մէջ: «Вѣный царъ» համար նա պատրաստ է դնել ամեն ինչ: Եւ այդ զգացմունքը անկարելի էր չը նկատել, տեսնելով մի քանի հարիւր հազար ժողովրդով: Թէն նա առաջուց գիտէր որ ոչինչ չէ տեսնելու, բայց հանդիսատեսական տանը չէր կարող և ձգտում էր դէպի քաղաքի կենտրոնը, կրեմլը, որի բարձրաբերձ առամասնուր պարիսպների և կոնաձև աշտարակների տակ ժամերով սպասում էր և կրեմ-

լի մարդկանց և առաքելի կանանց մի նոր հասարակութիւն, որ ամեն մի ամուսնական զոյգ տասնական դասակ ծնի, որոնց ձայներով մարդկային ուրախութիւնը հասնի մինչև արեգակը:

Ռուսաստանի ներքին նահանգներում մասամբ գործադրվեց այդպիսի օգնութեան մի ձև, երբ սաստիկ սովը մի քանի տարի օրանից առաջ ճարակից ամբողջ նահանգներ և իրեց գիւղացու ձեռքից թէ ուտելու հացը և թէ կենդանիների կերակուրը: Մի քանի զէնտութիւններ, նոյնպէս և կառավարչական հաստատութիւններ այն ժամանակ որոշեցին կարօտ գիւղացիների համար բերել տալ զրատ այն տեղերից, ուր սով չէր եղել և կենդանիները էփան էին: Օգնութեան այդ ձևը շատ տեղերում աջող հետևանքներ ունեցաւ և զէնտութիւնից մի քանիսը շարունակում են նրա գործադրութիւնը նոյն իսկ այժմ, երբ թէն սով չը կայ, բայց մասնաւոր կարօտութիւն ունի նահանգի այս կամ այն մասում: Այդպէս, օրինակ, Վեստսիկ նահանգում նոյն իսկ այս տարի զէնտութիւնը զինեց ձիւր կիրգիզներից էփան գնով և յետոյ ծախեց նահանգի գիւղացիներին մատչելի գնով, յետագիւղով վերձարումները յայտնի ժամանակ:

մէջ թափած մի կուտ ջրի նշանակութիւն ունի, ի հարկէ աւելի լայն է հասկանում ազգայնութեան և հաւատքի գաղափարները, բայց նրա մէջ էլ նեղ ազգային—կրօնական մօտիվը ունի տիրապետող նշանակութիւն. «Новое Время», «Московскія Вѣдомости», «Гржданин» աւելի կարող են համարվել բերան ազգեցիկ դատակարարի և խաւար մասսայի, քան նրանց հակաակարգները: Հարուստ վաճառականութիւնը իր բոլոր համակրանքներով նոյնպէս միշտ թերթերի կողմն է: Նա ընդունակ է հարապին անգլիկ բարեգործական զոհարարութիւններ աւելի իր ազգի համար, օգնել հաւատակիցներին, բայց աւելի հեռու գնալ մարդասիրութեան ըզգացմունքների մէջ նա անընդունակ է:

Երբ թիւղանութիւնի թիւղները, կրեմլի զանգակների աղմկալից ձայները և պալատի բաւկում գտնվողների ռուբաններն աւետեցին զբոսում կանգնած ժողովրդին, որ Յարը դուրս եկաւ Ռուսկէսկի սօբօրից թագապետի, ծիրանագեղատ և մի ձեռքին բռնած գայլախնդ, իսկ միւսում ինքնակական գունդը—աննկարագրելի էր կրեմլը պալատի ընդարձակ մարդկանց այդ անհղ ուղկանոսի շառաչելը և յուզումը, ռուբանները ուղղակի ծածկում էին թիւղանօթաձգութեան ձայները: Եարմարելով տեղից նա այժմ կամաց-կամաց յետ էր քաշվում հրապարակներից: Ժամի 4-ին արդէն դատարկվել էին բոլոր հրապարակները ու փողոցները, մարդ դարձանում էր, թէ ուր կորաւ այդ անհատը, թագաւորութիւնը: Սակայն երկեղեկան ժամի 9-ից կրկին դուրս թափվեց օտո կէս միլիոնից բաղկացած քաղաքացիներ, և փողոցներով զարնալ զինում էր դէպի կրեմլը՝ տեսնելու շրջացիչ հրապարակութիւնը, որը ձիւք որ մի զինվորական աշխարհ էր փոխադրում զիտողին:

Լ.

Մեզ մօտ, Անդրկովկասում եւս ամեն տարի տեղի ունի զանազան չրջաններում թէ սերմա-ցուի և թէ լծկան կենդանիների պակասութիւնը։ Եւ սակայն ոչ մի հաստատութիւն օգնութեան չէ գալիս կարօտ գիւղացուն։ Բացառիկ դէպքերում կառավարչական հաստատութիւնները պաշտօնա-կան ճանապարհով խնդրում են սերմացու բաժա-նելու, թոյլտուութիւն։ Սակայն կարիքը միայն բա-ցառիկ տարիներում չէ լինում։ այլ նա կայ միշտ, ամեն տարի, այս ու այն անկիւնում։ Այս տարի այս գաւառակն է բաղդաւոր, եկող տարի միւսը՝ և այդպէս փոփոխակի, երկար և կարճ ժա-մանակամիջոցներով։

Ով ծանօթ է մեր գիւղական կենսութիւնը, նա լաւ գիտէ, թէ ինչպիսի ամենամանրամասն կարիքներ չեն լրացվում ամբողջ տարիների ընթացքում և գիւղացու անտեսութիւնը աստիճանաբար քայ-քայվելով մի օր համարում է կատարեալ անկման և կործանվում է։

Այն միջոցը, որ գործ է գրվում մեծ թշուա-ռութիւնների ժամանակ, երբ կարիքը շատ է աչ-քի ընկնում և մարդկանց ուշադրութիւն գրա-ւում, պէտք է գործադրել մշտապէս, որպէս զի ամենօրեայ կարիքի առաջն առնվի, որ թէն կա-մաց կամաց, սակայն ժամանակի ընթացքում քայքայում է գիւղացու անտեսութիւնը նոյնպէս զգալի կերպով, ինչպէս և ժողովրդական մեծ աղէտները կարճ միջոցում։

Յանկալի է, որ յարգելի ամերիկեացի ձեռ-քով գործ գրվող միջոցը, գործ գրվի և թիւրքաց Հայաստանի միւս կողմերում, դրսից եկող նիւ-թական միջոցների աջակցութեամբ, որպէս զի թշուառ գիւղացին կարող լինի գէթ մասամբ զիմել իր աշխատանքին, և այդպիսով ձեռք բե-րել ապրելու միջոց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՂ ՓԱՍՏԵՐԸ ԽՕՍԵՆ
(Հայոց մամուլի բարձրից)

«Ամեն մարդ իրաւունք ունի յիմար լինել, բայց իմ հայրենակիցներն ի չարն են գործ դը-նում այդ իրաւունքը։ Նշանաւոր գերմանա-ցու այդ խօսքերն են յիշեցնում Աւետիք Արա-խանեանի արարքները, որը, ի չարք գործ դնե-լով այդ «իրաւունքը», ուղղում է հաւատացնել իր ընթերցողներին, թէ երկու անգամ՝ երկու չորս չէ, այլ վեց, և արեգակը ոչ թէ երկնակա-մարի վրա է, այլ գետնի տակ...»

Եւ յիշաւ, բաւական է միայն յիշել այն սօ-փեստութիւնները, որ «Տարազի» երեք համար-ներում իրան թոյլ տուեց պ. Արախանեան, համոզվելու համար, որ այդ պարունք օրօրում է իրան այն երեսակայական յոյսով, թէ կարող է բացի իրանից որ և է մէկին հաւատացնել, թէ երկու անգամ երկու՝ վեց է։

Մենք ամբողջ երեք շաբաթ սպասեցինք, և այժմ, երբ պ. Արախանեան ինքն իր բերանով յայտարարեց, թէ՝ «հարցը փակված է», ցոյց կը տանք, թէ այդ «հարցը փակված է» օլիմպիա-կան վիճի՞ր ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անջնջելի արատ «Մուրճի» խմբագրի համար։

Դիմենք փաստերին։

1) Պ. Արախանեան «Տարազի» № 17-ի մէջ մեղադրեց պ. Խ. Մալումեանին կեղծելու մէջ, ասելով որ բացի «Մշակի» մէջ տպագրած «ա-ռանց կենտի երկու ջուլտ գրութիւնները», նա ուրիշ ոչինչ չէ ստացել։

Պ. Մալումեան առաջարկեց «Տարազի» ժամա-նակաւոր-խմբագրին՝ չորս բերել «Մշակի» խմբագրատուն և տեսնել ինչպէս այն նամակնե-րը, որոնք զայրոյթ են արտայայտում յայտնի սկանդալի դէմ, բայց որոնք ցէնզուրայի կար-գադրութեամբ չը տպագրվեցին, այլ և այն նամակները, հեռագրիները և ընծան, որով յատ-կապէս ջնջում համակրութիւն է յայտնված պ. Մալումեանին (Տես «Մշակ» № 52)։

Պ. Արախանեան փախուստ տուեց և չեկաւ Դա մէկ յանցանք։

2) Երկու օրից յետոյ «Մշակի» № 53-ի մէջ տպագրվեց պ. Արախանեանին ուղղած հետե-ւեալ խօսքերը. «Երեկ, մայիսի 7-ին, նշանակած 12 ժամին, դուք չը բարեհաճեցիք գալ «Մշակի» խմբագրատուն, բացի դրանից, դուք ոչ մի տո-ղով չը բացատրեցիք ձեր չը գալու պատճառը, մինչդեռ ձեզ վրա բարոյական անխուսափելի

պարտք կար ստուգել փաստը և յետ վերցնել ձեր խօսքերը»։

Պ. Արախանեան երկրորդ անգամ փախուստ տուեց և այդ հարցին էլ ոչինչ պատասխան չը տուեց։ Դա երկրորդ յանցանք։

3) «Տարազի» № 18-ի մէջ, պ. Արախանեան փոխանակ յետ վերցնելու իր խօսքերը, կրկնա-պատկեց իր մեղքը, սնդեւով, որ համակրական նամակներ չեն եկել, այլ միայն սկանդալը և ըստ-հանգր զատապարտող նամակներ։ Դա էլ երրորդ յանցանք։

4) «Մուրճի» խմբագրի վարժուները զատա-պարտելու և մի և նոյն ժամանակ հասարակու-թեան հայիւ տալու համար՝ եօթը միանգամայն վստահելու անձինք, պարոններ՝ Մալումեան, Քոչարեան, Լուսինկի, Միքայէլեան, Գիւլնա-զարեան, Բալաբեան և Յովհաննիսեան «Մշակի» № 55-ի մէջ թեւեցին այն բոլոր նամակները և հեռագրիները, թուով 20, որ ստացել է պ. Մալումեան, գոչուսներով ապացուցանելով, որ պ. Արախանեանի խօսքերը՝ լոկ զրպարտու-թիւններ են։ Ի՞նչ էր մնում պ. Արախանեանին անել։ Հրապարակով յետ վերցնել իր խօսքերը և ներողութիւն խնդրել պ. Մալումեանին։ Բայց նա ոչ միայն այդ էլ չարաւ, այլ և մեղադրեց, թէ այդ եօթն անձանց և թէ պ. Մալումեանին կեղծելու, սուտ խօսելու մէջ, անուանելով մե-կին ֆոփոսներ և միւսներին ֆոփոսիկի ըն-կերներ, կեղծողներ և այլն և այլն։ Դա էլ չորրորդ և ամենամեծ յանցանք։

5) Այդ էլ բաւական չէր։ Իր յանցանքը ծած-կելու համար պ. Արախանեան թող տուեց ի-րան կեղծել. «Նա «Տարազի» մէջ ուղղակի ա-սում է, որ իբրեւ թէ «Մշակի» մէջ պ. Մալու-մեան ասել է, թէ ստացել է բազմաթիւ հա-մակրական նամակներ։ «Բազմաթիւ» բառը պ. Արախանեանի հարած, չինած բառն է։ Այդ-պիսի բառ պ. Մալումեանի նամակի մէջ երբեք չէ եղել։ Դա էլ հինգերորդ յանցանք։

6) Այդ կեղծիքին յաջորդեց մի ուրիշ, էլ ա-ւելի աննշանի կեղծիք։ Յիշատակներ առաջ բերե-լով եօթ անձանց նամակից, պ. Արախանեան «Մշակի» № 55-ի մէջ տպած՝ «պարուն ա-կում են նաև յատկապէս համակրական խօսքեր», խեղաթիւրել, կեղծել և չինել է «պատահում են նաև յատկապէս համակրական խօսքեր», և թող տալով մի այդպիսի կեղծիք, նա յանդիմ-ն է աւելցնել. «Դա մի ո՞ճ է, որ իսկից չէ սաղում արդարացիներու նրան, որը լրացրով ստապրէլ էր եկել հեռահաղորդութիւն յայտնելու իբր թէ բազ-մաթիւ անձերից ստացած ջնջում համակրութիւն-ներին համար»։ Դա էլ վեցերորդ յանցանք։

Այդպէս, ուրեմն պ. Արախանեան գործեց մեղք, և իր այդ անմասն անբարեխղճութիւնը ծածկելու համար, «Տարազի» երեք համարներում նա այնպիսի սփեստութիւններ արեց, և դի-մեց այնպիսի խարդախութիւններ, որ իրանց թոյլ չեն տուել մեր մամուլի արատաւորված ներկայացուցիչներն անգամ։ Այդ սփեստու-թիւններից մէկն էլ այն է, որ նա, թողնելով եօթն անձանց նամակի բովանդակութիւնը, որ տպված է «Մշակի» № 55-ի մէջ, խոյս տալով նրա մէջ պարունակած փաստերից, պօղիցիա-կան ին յատուկ ձեւերով, սկսեց զբաղվել այն հարցով, թէ ով ինչպէս է ստորագրել, թող տալով նրանց հասցէին ամենազգուշիկ խօսքեր և ակ-նարկութիւններ, մոռանալով՝ որ երբ նամակի ստորագրողները իրանց վրա են վերցնում զրա-ծի իրաքանչիւր տողի պատասխանատուութիւնը, ոչ ոք իրաւունք չունի մանել ընկերների փոխա-դարձ փոխանակեան հարցի մէջ։

Այդպէս ուրեմն, ճշմարտութիւն պաշտպանե-լու զիմակի տակ, կեղծիքի դէմ կուող պարոնը իրան թոյլ տուեց մի շարք կեղծիքն եր, խարդախեց տպագրած խօսքերը, վերագրեց ու-րիշին այնպիսի խօսք, որ նա չէ գրել, չը զգաստա-ցաւ այն եօթն հոգու համակից անգամ, որը իս-կապէս մի վերջնական վիճիւ էր, չը յարգեց հա-սարակական կարծիքը, որի մի արտայայտութիւն էր Բագուի հեռագիրը 10 հոգու ստորագրու-թեամբ, և իր նեղ վիճակից մի կերպ դուրս պրծնելու համար՝ պ. Արախանեան զիմեց սօ-փեստութեան, սփեստութիւնից անցաւ խար-դախութեան, խարդախութիւնից ամենամեղա-րեկի՞ծ ինսիստացիներին...։

Այդպիսի վարժուներ իրան թոյլ չի տալ ոչ մի աղնիւ մարդ, ոչ մի բարեխիղճ գրող, այլ միայն ստիճասող, զրպարտիչը, և ինսիստացիներ...

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՅ

Մայիսի 17-ին

Թագադրութեան տնայնաւորութիւնը այստեղ կատարվեց առանձին շուքով։ Մեր քաղաքը մի-ջոց չէր խնայել՝ կարելոյն չափ փառաւորապէս տօնելու համար այդ օրը։ Բազուն միանգամայն կերպարանափոխված էր։ Ներքին փողոցներից սկսած մինչև ամենայայտնի փողոցներն ու հրա-պարակները՝ զարդարված էին անթիւ ու անհա-մար զրօշակներով։ Իւրաքանչիւր տանուր պա-ճուճել էր իր տունը գոյնզգոյն զարդերով, պատշգամբներ, դռներ ու լուսամուտներ թաղ-ված էին գորգերի, վնջերի ու ծաղիկների մէջ։ Ծաղկազարդերի միջին տեղ-տեղ աչքի էին ընկ-նում Թագաւոր Կայսրի ու Թագուհու Կայսրուհու, կիսաբաժնիները։ Այդ բոլորը՝ երեկոյններ էլեւ-տրական լոյսի տակ կազմում էր մի հրաշալի տեսարան։ Առաւելապէս ուշադրութիւն էին գը-րաւում՝ դուռայի, նահանգապետի, Գուստաւ-Լիստի շինութիւնները իրանց զարդարանքներով, բայց զրանցից ոչ մէկը այդքան ճաշակով, չքեղ ու զարդարուն չէր, որքան Համբարձում Մէլի-քեանի տունը, որը, ինչպէս ասում են, հինգ հարիւր բուրձուց աւելի ծախս էր արել զրա հա-մար։

Հանդէսը փառաւոր զարմնելու համար, քաղա-քային վարչութիւնը, բացի սովորական հրախա-ղութիւններից, նախառակաբարձր էր դատել կազմել ձրի ներկայացուցիչ հասարակ զատա-կարգի համար և հիւրասիրութիւններ անել։ Ե-րեք տեղ սեղան էր պատրաստված զինուորա-կանների, բրիտանացի և մասնէտական ժողովր-դի համար։ Հազարաւոր մարդիկ պէտք է հիւրա-սիրվէին։ Նախօրէն պատրաստած էին հասարակ սեղաններ՝ սպիտակ ծածկոցներով և նստարան-ներ չամաճայն քաղաքային վարչութեան յայ-տարարութեան, բացի մի բանի տեսակ ուտե-լիքներից, ընծաներ ևս պիտի տրվէին, այն է՝ «կրօնականներ» կայսրի ու Կայսրուհու պատկեր-ներով։

Բայց այդ չափովեց, և ոչ միայն չիրագործ-վեց այն, ինչ որ ծրագրված էր, այլ և ճաշը ա-նջող անցաւ։ Ընդհանուր իրարանցում անկար-գութեան էր համարում։ Նիւթայեան հրապարա-կում մասնակցողների սեղանն էր։ Գեռ վաղ առաւօտեան եկել կուտակվել էին հազարաւոր մարդիկ՝ համբարներ, բանուորներ, արհեստաւոր-ներ և այլն։ Գրգռված ճաշակով՝ ամենքը փախ-կ և խորովածի էին սպասում, ինչպէս որ յայտա-բարված էր։ Պատրաստի սեղանը վաղ էր, իսկ մարդիկ եռապատիկ շատ։ Միջոց չէր նախատես-ված համաձայն պատրաստութեան՝ մարդկանց քա-նակութիւնը որոշելու և կարգը պահպանելու հա-մար։ Եւ ահա նստելու հրաւերը լսելուն պէս՝ հա-զարաւոր ամբողջ շարժվեց տեղից։ Սկսվեց սար-սափիւնի իրարանցում։ Մէկ մէկու հրելով, ոտի տակ տալով՝ ուրախութեան գոռում-գոչիւններով աւելի ճարպիկները պատեցին սեղանների շուրջը... Ամբողջ ժամերով արեւի տակ նստած՝ սպասում էին, տեղից չէին շարժվում։ Վերջա-պէս հասաւ ճաշելու քաղնը։ Եւ հենց այդ միջո-ջին սկսվեց մեծ անկարգութիւն, միմեանց ձեռ-քից խլում էին. ով ուժեղ էր՝ նա էր վերցնում։ Իրարանցումը և նոյն իսկ ծեծը ամեն ինչ տալիս ու վրա արաւ. կարգը խառնաբախվեց և դրանով էլ ճաշին վերջ տրվեց. շատ չտեսքը հարկադր-ված եղան, առանց ճաշի համ տեսնելու, քաղ-ցած վերկնաւ և զքօռ ու փոշման՝ հեռանալ։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՅ

Ապրիլի 30-ին

Ապրիլի 20-ին Վաղարշապատի հայտարար գա-տաւորի մօտ ընկնեց մի հետաքրքիր գործ, որով փանական բժիշկ Տէր-Խաչատրեանը մեղադրվում էր Մ. Տէր-Պետրոսեանի հիւանդ երեխային բը-ժշկական օգնութիւն չը հասցնելու համար։ Հայ-տարար գատաւորը, մեղաւոր գտնելով բժ. Տէր-Խաչատրեանին, ենթարկեց 5 բուրլի տուգանքի։ Դատաւարական ընտելութեան ժամանակ պարզ-վեց հետեւեալը։ Յունիսի 24-ին բժ. Տէր-Խա-չատրեանը, հրաւեր ստանալով Մ. Տէր-Պետրո-սեանից, այցելում է նրա հիւանդ երեխային։ Միւս օրը հիւանդի դրութիւնը աւելի ևս վատա-նալով, երեք անգամ ուղարկում են բժշկի ետե-ւից, բայց բժիշկը ոչ մի անգամ էլ չէ գալիս, իսկ բժշկի ծառան երրորդ անգամ հրաւիրողին

յայտնում է, որ բժիշկը չէ կամենում գալ, ու-րովհետեւ առաջին վիզիտի համար դեռ չեն վը-ճարել։ Տէր-Պետրոսեանը, լսելով այս առարկու-թիւնը, անմիջապէս ուղարկում է բժիշկին առա-ջին այցելութեան վճարը, խնդրելով մի և նոյն ժամանակ սարգել, թէ ինչով է ինքը բարկացել նրան, որ մերժում է հիւանդ երեխային օգնու-թիւն հասցնել. նամակը փողի հետ բժիշկը ըս-տանում է, բայց ոչ պատասխանում և ոչ էլ շարունակում է իր այցելութիւնը։ Հիւանդի դրու-թիւնը օրից օր վատանում է և, գաւառական բժշկի բացակայ լինելու պատճառով, հիւանդը մնում է առանց բժշկական օգնութեան մինչև փետրվարի 7-ը, երբ հաղիւ գտնում են գաւա-ռական բժշկին։ Բայց արդէն ուշ է լինում, և երեխան մեռնում է երկամուտքի բորբոքումից, որպէս հաստատում է պատահմամբ Լէվիաժին եկած բժ. Լ. Տիրախանը, այն ինչ վանական բժիշկը առաջին օրը դեղատոմս էր տուել բրօն-խիտի դէմ։ Բժիշկ Տէր-Խաչատրեանը աշխատում էր հաստատել, որ ինքը հրաւեր չէ ստացել Տէր-Պետրոսեանից, ներկայացնելով մի և նոյն ժամանակ մի վկայական ճեմարանի տեսչի օգ-նական Կարապետ վարդապետի ստորագրու-թեամբ այն մասին, որ հենց այն օրը բժիշկը զբաղված է եղել հիւանդ աշակերտներով և վա-նական դեղատոմս։ Տէր-Պետրոսեանը իր կողմից յայտնեց, որ իր ծառան անձամբ այդ օրը տե-սել է բժիշկին տանը, և որ բժիշկը այդ օրը ճեմարանի հիւանդանոցում ոչ մի հիւանդ չէ ու-նեցել, որի հաստատութեան համար խնդրեց պահանջել հիւանդանոցի գիրքը, որտեղ գրված է հիւանդ աշակերտների անունն ու նրանց հի-ւանդութեան նկարագրութիւնը ամենհաւով, մասնացոյց անելով մի և նոյն ժամանակ և այն տխուր երևոյթի վրա, որ բժիշկ Տէր-Խաչա-տրեանը առհասարակ հեռու է պահել իրան գիւղի այն հիւանդներից, որոնք աղքատ են ե-ղել և որոնցից յոյս չէ ունեցել վարձ ստանալու։ Բժիշկը հաղորդեց դատաւորին, որ Տէր-Պե-տրոսեանը իր նամակի մէջ հայտնել է իրան, այդ պատճառով ինքը ոչ պատասխանել է և ոչ էլ շարունակել իր այցելութիւնը։ Մ. Տէր-Պե-տրոսեանը խնդրեց ներկայացնել իր գրած նամա-կը, յայտնելով, որ եթէ նրա նամակի մէջ դա-տաւորը գտնի գտնէ մէկ բառ վերաւորական, նա խոստանում է հրապարակով ներողութիւն խնդրել բժիշկի և յետ վերցնել սկսած դատը։ Բժիշկը չը ներկայացրեց այդ նամակը։ Դատա-ւորը, գործը պարզված համարելով, կայացրեց վճիռ և մեղադրեց բժիշկին։

Թողնելով ընթերցող հասարակութեանը դատել բժիշկ Տէր-Խաչատրեանի վարժուքը, մենք կարեւոր ենք համարում յիշատակել այստեղ, որ Տէր-Գրիգորեան, Անդեանեան և Վարդանեան բժիշկներից յետոյ, որոնք իրանց մարդասիրութեամբ վայե-լում էին հասարակութեան յարգանքն ու համա-կրութիւնը, նոյնանման դէպքեր յաճախ են տե-ղի ունենում, ուստի և բաւականապէս իր զայրոյ-թը արտայայտելով միայն, այլ և աւելում է աշ-խատի իր սեփական գիւղական բժիշկն ունենա-լու, որով միանգամայն ազատված կը լինի թէ վանական և թէ գաւառական բժիշկների կամայա-կանութիւնից։

Ա. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՅ

Մայիսի 13-ին

Շտապում եմ հաղորդել մի ուրախալի լուր։ Երէկ ստացվեց նահանգապետի թոյլտուութիւնը Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընթերցարանը բանաւում ի յի-շատակ։ Նոյա կայսերական Մեծութիւնների թա-գադրութեան։ Վաղուց ի վեր Կարսի հայ հասա-րակութիւնը փախազուժ էր մի կանոնաւոր ըն-թերցարան ունենալու։ Երբեմն, հանգուցեալ Ա-դուանեան եպիսկոպոսի օրով, այստեղ գոյու-թիւն է ունեցել հոգեւոր իշխանութեան հակո-ւրութեան տակ գտնվող մի ընթերցարան, բայց անհոգութեան չնորոյթ, դրա ամենաշնորհ զըր-քերը սեփականել են անյայտ անդամներ և միայն թողել ոչ նշանաւորները։ Հասարակական ժողովարանի գրադարանը կարող էր մասամբ լրացնել ընթերցանութիւնի փափաքը, բայց ան-զամաձարի թմանութիւնը և նոյն իսկ գրադա-րանի անկանոն վիճակը արգելք էին դրան։ Առ այժմ, ի հարկէ, մեծ հոգատարութիւն է հարկա-

ժողովրդական պրոգրամայն Արիական պատգամա-
ւորների համար առանձին մընիւ էր: Նրանց
սեղանների վրա, գինու փոխանակ, դրված էին
քաղցր և զովարար ջրեր: Այդպէս էին զըն-
վում բուխարական էմիրը և խիվայի խանը: Նոցա
Մեծութիւնները մասն դահլիճը 6 ժամ 45 րո-
պէին, ուղեկցութեամբ օտար իշխանների, Մեծ-
իշխանների, Մեծ իշխանների և պրինցների:
Նոցա Մեծութիւնների սեղանի վրա, թագաւորի
կողքին նստած էր յոնաց թագուհին, իսկ թա-
գուհու կողքին—Նեապոլիտանեան պրինցը: Նոցա
Մեծութիւնների դիմաց նստած էր պալատի
մինիստրը, նրա կողքին—Պետերբուրգի և Մոսկ-
վայի ազնուականութեան պարագլուխները: Հա-
ջի ժամանակ անում էր պալատական երաժշտու-
թիւն: Կենացներ չը կային: Հիւրերից չատե-
րի հետ Նոցա Մեծութիւնները ողորմած կեր-
պով խօսում էին:

Այսօր առաւօտեան Մոսկվա հասաւ պարսից
Հասի ներկայացուցիչը՝ պրինց Աբաս-Միրզա: Կա-
յարանում նրան զիմաստըցին կայսերական ըն-
տանիքի անդամները, թագաւորի սպիտայի ան-
ձինք և Մոսկվայի վարչութիւնը:

ՊԱՐԻՋ, 20 մայիս: Այսօր յանձնարարեց
կամ Մոնթէնէլլոյն յայտնել թագաւոր Կայսրին
նախագահի և հանրապետական կառավարութեան
խորին ցաւակցութիւնը խղիւղեցիկ դաշտի վրա
պատահած աղէտի համար:

ՀՈՍՄ, 20 մայիս: Թիւրքաց զօրքերը, օգնու-
թեան հասած զօրք չորսով, ապառքեցին վամօսում
պաշարված զօրքաւորները: Գործերի դրութիւնը
կրեւելում հանգստացնող բնաւորութիւն ունի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 մայիս: Կառավարչական հա-
ղորդութիւն. «Մայիսի 17-ի երեկոյից Մոսկվա-
յում խողիւղեցիկ դաշտի չորսը սկսեց հաւաք-
վել քաղաքային և եկեղ. հասարակութեան անա-
գին բազմութիւն, իսկ մի քանի հարիւր հազար
հողի, մայիսի 18-ի զբօսանքին մասնակցելու
համար: Տօնախմբութեան և ընծաներ բաժանե-
լու օրը նշանակված էր առաւօտեան 10 ժամից,
բայց ամբար, չը սպասելով այդ ժամանակին և
այն անձանց զայտնել, որոնք պէտք է դեկավա-
րէին տօնը, անհապաքի այժմ առաւօտեան 6
ժամից վաղ թափվեց անխաղ կերպով փայտեայ
փայտների մէջ եղող նեղ անցքերը, ուր գտնվում
էին բուֆէտներ, որի ժամանակ շատերը արօր-
վեցին վրա թափվող ժողովուրդից: Ամբարի այդ
անկարգ շարժումը երկար չը տևեց, օրից յետոյ
անցապաղ միջոցներ ձեռք առնելիցն վնասված-
ների օգնութիւն հասցնելու և զոհերի թիւը
որոշելու համար: Այդ ժամանակ սպանվեցին 979
հոգի և ծանր վիրաւորվեցին 459 անձինք: Վեր-
ջիններից շատերը վնասվածքներ դրութեան մէջ են:
վնասվածներին բժշկական օգնութիւն է հասցը-
ված և Բարձրագոյն հրամանով նպաստ կը տրվի:
Բացի դրանց, Նորին Կայսերական Մեծութիւնը
բարեհաճեց հրամայել 1000-ական բուլի տալ
խրաբանչիւր որդաքած ընտանիքին և սպանված-
ների թաղման ծախսն անել:

ՊԵՏԱՎՈՐՍԿ, 21 մայիս: Մայիսի 20-ին բժշ-
կական սեզոն է սկսված ժէլէնօօֆտիսիում,
յոնիսի 1-ին բայցվում է սեզոնը կիւրօֆոզակում:

ԲՈՒԽԱՐԵՍ, 21 մայիս: Սինթը ընծանելով միտ-
րօպօլիսի գործը, որը մեղադրվում է այն բա-
նում, որ նա հերետիկոսական նորոգութիւններ
է արել պատարագի մէջ, սեփականացրել է եկե-
ղեցական բարձրագոյն իշխանութիւնը, որ պատ-
կանում է սինթին, և ուրիշ յանցանքների մէջ,
մայիսի 20-ին վճիռ կայացրեց, որով միտրօպօլի-
տը զրկվում է աստիճանից և ուղարկվում է
վանքը:

ԼՕՆԻՕՆ, 21 մայիս: «Times» հայտնում է,
որ Արդուաճ փաշա դիմեց կանկի օտար հիւ-
պատաններին խնդրելով յանձն առնել միջնորդի
զեր վաճառի ապստամբների հետ բանակցելու
ժամանակ: Բայց երբ հիւպատոսները հաղորդե-
ցին նրան ապստամբների առաջարկած պայման-
ները, Արդուաճ-փաշա պատասխանեց, թէ ինքն
նախ նոր հրահանգներ կը խնդրի, մի և նոյն
ժամանակ 3000 զօրք ուղարկեց ապստամբների
դէմ, որոնք յամառ կուրից յետոյ, դուրս քշեցին
նրանք Զիվարից, և ապա աղաղակեցին վամօսը:

ՄՕՍԿՎԱ, 21 մայիս: Նոցա Մեծութիւնները,
Մեծ իշխան Սերգի Ալեքսանդրովիչի և նրա
ամուսնու ուղեկցութեամբ մայիսի 20-ին այցե-
լեցին Մարիինսկայա հիւանդանոցը, ուր գտն-
վում են 60 հիւանդներ, խողիւղեցիկ դաշտից
բերված: Նոցա Մեծութիւնները հարց ու փորձ
էին անում հիւանդներին և զբեցին իրանց Անտոն-
ները այցելողներին գրողով:

Խողիւղեցիկ դաշտում սպանված և վաղան-
կօվեան գերեզմանոցում գտնված բոլոր դիակ-
ները թաղված են:

Մոսկվայի Օգոստափառ տանտիրոջ՝ Նորին
կայսերական Բարձրութիւն Մեծ իշխան Սերգի
Ալեքսանդրովիչի մօտ եղած պարահանդէսը եր-
կուշարթի, մայիսի 20-ին հրաշալի էր: 10 1/2 ժա-
մին իրանց ներկայութեամբ բաղաւորեցին
պարահանդէսը թագաւոր Կայսրը և թագուհի
կայսրուհին: Բարձրագոյն բարախի ձայնը տե-
տեց Նրանց դալու լողէն: Օգոստափառ գեներ-
ալ-նահանգապետի պարահանդէսը բոլորի վրա
խորը և ուրախ տպաւորութիւն գործեց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ			
Մայիսի 17-ին			
Լճագոյնի վրա 10 ֆունտ արծէ . .	94	15	4
Բերլինի վրա 100 մարկ	45	85	
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	30	
Ռուբլի արծէ	7	50	
Մաքսային կուպոններ	149		
Բորսային դրակօստ	5	70	
4 1/2 օրական բէնտա	98 1/2		
1 1/2 օրական 5 1/2 անալիս փոխաւորթ .	289 1/2		
. Երկրորդ	253 1/2		
5 1/2 օրական թղթ. աղն. կալ. բանկի	213 1/2		
5 1/2 օրական երկաթուղ. բէնտա	100 1/2		
4 1/2 օրական փոխաւորթեան	98 3/8		
4 1/2 օրական ֆրան. թղթ. աղն. կալ. բանկի	100		
Աղն. կալ. Պետ. բանկի խաղարկութ. .			
4 1/2 օրական վալյակ. գիւղ. հող. բանկի	100 7/8		
Փոխ. կրեդիտ. ընկեր. մատալ. . . .			
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օրինգայիններ . . .	101 1/4		
Մոսկվայի քաղաք. օրինգայիններ .	101 1/4		
Սթէտայի	101		
Թիֆլիսի	98 1/4		
Թիֆլիսի կալ. բանկի 6 1/2	10		
5 1/2	99		
Քաւկասի	60 1/2		
5 1/2	101 1/2		
5 1/2	99 1/2		

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱՄԱՍՆԻ, Ատտաւածատուր Մալիսեան:
«Մշակ» ձեռք կուղարկվի յունիսի 1-ից: Բաժա-
նորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամ-
սի մէկից միայն:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ, Մատվէլ Կոստանեան: Ու-
ղարկեցիք մայիսի մէկից, կարգադէր վերին
պատասխանը:

ՎԱՐՆԱՆ, (Բոլորիւր) Հայոց ընկերցարան.
Ձեռք ուղարկվեց «Մշակ»:

Խժաղիւր՝ ԱԼԷԲԱՆԴԻ ԲԱՄԱՆԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐՇՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌԻՐ
ՀԻՒՆԴԱՆՈՅ
Բ. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, սիֆիլիսի և վէներական հիւանդու-
թիւնների:

Գ. Գ. ՋԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային:

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԷՎԱՆ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11
ժ. կանանց և երեխ.:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԷՎԻԻ—12—1 ժ. ականջի, կո-
կորդի, թոքի և կրծքի: Երկուշարթի, չորեքշա-
րթի և ուղեղաթի:

Ա. Մ. ՓՈՒՎԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե-
կայոց և նեարդային: Երեքշարթի, հինգշարթի
և շարթի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-
կայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԷՎԻԻ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շա-
բաթ:

Ա. Մ. ՓՈՒՎԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշարթի
և չորեքշարթի և ուղեղաթի:

Ա. Գ. ԳՈՒՎԻԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի
և ռեուկային օրգանների: Ներքին և մարթի:

Ա. Գ. ԳՈՒՎԻԿՈ քիմիական և խոշորացուցկան
հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-
րանի, կաթի և այլն:

Վճար 50 Կ. Համախորհրդի (Կոնսիլիումի) և
օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերադասուհի՝

Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԻԵԱՆ

Այս օրերս լոյս կը տեսնի
ՓՈՒՐԻԿ ԶՐՈՅՅՆԵՐ
Ժողովածուն
ԲԱՐՈՒՐԵԱՆՑԻ

1—1
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ
որ լաւ զիտէ հայերէն լեզուն, կրօնագի-
տութիւն և հայոց մատենագրութիւն,
կամենում է տներում դաս տալ այդ առար-
կաներից՝ չափաւոր գներով:
Հասցէն իմանալ Բարեկործանական ընկե-
րութեան գրասենեակում, Սերգիիվսկայա
փողոց, տուն № 16:
(№ 58)

СЪВЕРНОЕ СТРАХОВОЕ ОБЩЕСТВО
доводить до всеобщаго свѣдѣнія, что въ г. Баку, на Николаевской ярмаркѣ,
въ лавкѣ № 31—42, съ 6-го сего мая, производится
РАСПРОДАЖА
мануфактурныхъ товаровъ разныхъ московскихъ фабрикъ, какъ-то: Морозо-
выхъ, Барановыхъ, Цинделя, Зимана, Зубкова и др., въ количествѣ 500
вишъ, оставшихся послѣ аваріи.
Распродажа будетъ производится покипно, большими и малыми пар-
тіями и поштучно.
(№ 58) 2—5

ՊԱՆՍԻՈՆ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ
(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՌՈՐ ՈՒՍՈՒՄԷ. ԹԻՖԼԻՑՈՒՄ)
Ընդունում է երթևեկ, կիսաթշուակաւոր և գիշերօթիկ աշակերտներ, պատ-
րաստում է գի մնա գի աների, կաղե աների կօրպուսի, գեմէմէրնի,
բէալական ուսուցիչ արաների համար:
Ուսուցիչական տարվայ վարձն է փոքր պատրաստականի համար 60 ռուբլի.
մինչև երկրորդ դասատուն 100 ռ. երկրորդից վեր՝ 150 ռուբլի:
Այս տարի գիմադիւս և բէալական ուսուցիչական մանկու համար ընտրվին տուղ
12 աշակերտներից 11 հոգի յաջողութեամբ ընտրվին են տուել և ընդունվել, որ կաղ-
մում է 92%:
ՈՒՍՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԱՄԲՈՂՋ ԱՄԱՌ
Հասցէն. ՏԻՓԼԻՍԷ. Տոլոպի. Դանовская ул., № 11. собст. домъ.
(№ 47) (5) 7—10

ԳՈՒԿ-ՈՏԻԿԻ

СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА
ПРИВЛЕЧЕНІЮ ПОДАДА ПАСПОРТА ПОМАДЫ.

ԳՈՒԿ-ՈՏԻԿԻ

ԵԾԺԵՆԻՍԻ ՊԵՏԱՍ

Երեսի մարիւ կարկեցնելու համար պօմադ. ոչնչացնում է չուտով երեսի վրա եղած կար-
միր բիծերը և մաները. այս միջոցը առաջ է բերում նաև երեսի թարմութիւն և գեղեց-
կութիւն: Գինը 1 ռ. 60 Կ.

Elixir Melange

Մաղերը աճեցնելու և դիւր թեփը ոչնչացնելու հեղուկ: Գինը 2 ռ.

ԵԾԺԵՆԻ ՊԵՏԱՍ

սպիտակ, վարդագոյն և Բալէ (Թուս դեմը ունեցողների համար) նա ամուր կերպով
պահպանվում է մարթու վրա և բոլորովին աննկատելի է աչքի համար, մարթուն տալիս է
նոյնպէս խիստ կակոթութիւն, առաձգութիւն և քրեղութիւն: Գինը և 1 ռ. 20 Կ. 1 ռ. 50 Կ.

ԵԾԺԵՆԻ ԿԱՐՄԻՆԵՐԿ

հեղուկ վիճակի մէջ այտերին և ականջներին տալիս է բոլորովին ընտան, վարդային գոյն
որ ոչ ցերեկվայ, ոչ երեքտարական լոյսից չէ փայտում: Գինը 1 ռ. 50 Կ.

ՄԻՏԱՅԻՆ ԲԱԼՁԱՍ

(պուրա հեղուկ վիճակի մէջ), տալիս է երեսին, վզին, ձեռքերին քրեղ կակոթութիւն և մարմա-
րեանման մաքրութիւն: Նա ոչնչացնում է արեհարբը, մոտերը և մարթու վրա եղած ամէն մի ան-
հարթութիւն և աղեղութիւն: Գինը 1 ռ. 75 Կ.

ԲԻՆԱ-ԳԼԻՅԵՐԻՆԵԱՅԻՆ

դիւր պօմադ Պէրուանական բաղաւորով եփած՝ մաղերը պնդացնելու, խտացնելու և աճեցնելու հա-
մար: Գինը 2 ռ.

ԽՈՒՆԶԱՅԻՆ ՊՕՄԱԴ

նրա գործածութիւնից յետոյ ձեռները ստանում են դարմանալի սպիտակութիւն և ձկնաու-
թիւն: Գինը 1 ռ. 30 Կ.

ՈՒՆԴԱՐԱԿԱՆ ԵՍՍԷՆՑԻԱ

բեղերի համար (Բիւ-Գուտման) տալիս է նրանց անմիջապէս հարկաւոր ձեռ, ամրացնում է
նրանց և նպաստում է նրանց արագ աճման: Գինը 75 Կ.

ՆԵՐԿԵՐ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

(Բիւ-Գուտման), սև, չաղանակաւոր և խարտեայ: Այդ ներկով ներկված մաղերը պահպանում են
իրանց գոյնը 6 շաբաթվայ ընթացքում: Գինը 3 ռ.

Նախվում է բոլոր դեղաբարական և կօսմէտիական խանութներում: Գ Լ ա ռ ո պ ա հ և ս
տ ը՝ Բարձրագոյն հաստատված՝ դեղաբարական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ Թ Ի Ֆ
Լ Ի Ս և Բ ա գ ո ս
(№ 26) 11—50

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԵՐԻ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԲԱՅՎԵՅ ՆՈՐ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅ
Գ. Մ Դ Ի Վ Ա Ն Ե Ա Ն Ի
վաճառվում են հայերէն ամէն տեսակ ընթերցանութեան գրքեր և դասագրքեր,
ընդունվում են գրքեր ԿՕՄՄԻՍԻՅՈՎ և ամենաձեռնառու պայմաններով՝ վաճառելու հա-
մար: Պատուէրները կատարվում են ամենաձգողութեամբ և շուտով:
Գրմել: ՏԻՓԼԻՍԷ, Головинскій проспектъ, домъ Ротинава, книжный ма-
газинъ Г. Мдиванова.
(№ 55) 2—2

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԷՐ
ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶԲ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգէ: Անտվերպէնի 1894 թվի համաշխար-
հային ցուցահանդիսում:
Գլխաւոր պահեստը՝ դեղաբարական ապրանքների Բարձրագոյն հաստատված
կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում:
(№ 6) (6) 20—50